Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման ուղղությամբ իրականացվող ծախսումների և միացման ժամկետների մշտադիտարկման նպատակով նախատեսվում է մշակել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը:

Նախատեսվում է հաստատել էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնները, ինչը հնարավորություն կտա մեկ միասնական փաստաթղթում համախմբել էլեկտրաէներգետիկական համակարգի պլանավորման, կարգավարման ու շուկայի մասնակիցների միջև տեխնիկական բնույթի փոխհարաբերությունները կանոնակարգող իրավադրույթները՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային առաջավոր փորձին:

Լիցենզավորված անձանց մոտ իրականացվող մոնիթորինգի ընթացակարգերը բարելավելու նպատակով նախատեսվում է մշակել էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգը:

Նախատեսվում է ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հանրային կազմակերպությունների 2017 թվականի գնումների պլանների մոնիթորինգի արդյունքների մասին վերլուծական տեղեկանքը, որն իրականացվում է հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշման №1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանների

համապատասխանությունը հանձնաժողովի նույն որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին գնահատելու համար:

Նախատեսվում է ՀՀ տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայում՝ համաձայն հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 22-ի N88Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության ուղղությամբ իրականացվող ծախսումների և միացման ժամկետների մշտադիտարկման նպատակով նախատեսվում է մշակել խմելու ջրի ոլորտում ծառայություն մատուցող ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը:

Նախատեսվում է լրամշակել հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի №272Ն որոշմամբ հաստատված՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման կարգը՝ պարզեցնելով լիցենզիա ստացող անձի կողմից հանձնաժողով ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և սահմանել լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման ընթացակարգը:

Նախատեսվում է մշակել վերլուծական տեղեկանք Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ, որն ուղղված է ՀՀ տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանն ու շարժական կապի ցանցերի և ծածկույթների շարունակական արդիականացմանը:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մինչև սույն թվականի մայիսի 1-ը մամուլում հրապարակելու համար նախատեսվում է մշակել հանձնաժողովի 2016 թվականի գործունեության հաշվետվությունը:

Կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող

ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունները, ինչի շնորհիվ շահագրգիռ անձանց համար հնարավորություն կընձեռվի ուսումնասիրել մատակարարների կողմից սպասարկման որակի ապահովմանն ուղղված գործունեության արդյունավետությունը:

Նախատեսվում է եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը, ինչն անհրաժեշտ է նշված համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու համար:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: